Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 3-ի N 901 - Լ որոշման

«Հավելված N 5
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 16-ի N 710-Լ որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգի կարգավորման առարկան հանձնաժողովի խնդիրները, գործառույթներն ու հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանն առնչվող հարաբերություններն են:

2. Հանձնաժողովի ստեղծման նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրին (այսուհետ՝ ծրագիր) դիմած և շահառուի կարգավիճակ չստացած ընտանիքների (այդ թվում՝ մեկ անդամից բաղկացած) անհատական դեպքերի ուսումնասիրությունն է: Այդ աշխատանքների իրականացման նպատակով հանձնաժողովը կազմակերպում է նիստեր, ամփոփում և մշակում դրանց արդյունքները և դրանց հիման վրա կայացնում որոշումներ:

3. Հանձնաժողովն իր աշխատակարգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն աշխատակարգին համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրը ծրագրին դիմած և մերժված (շահառուի կարգավիճակ չստացած) դիմումատուների անհատական դեպքերն ուսումնասիրելու նպատակով գործընթացների իրագործումն է, որոնք ուղղված են որոշումներ

կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության կամ առկա տեղեկատվության թերի կամ ոչ ճշգրիտ լինելու հետևանքով դիմումատուների չիրացված իրավունքների վերականգնմանը:

5. Հանձնաժողովն իր խնդրի կատարման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հանձնաժողովի նիստերի ընթացքում ուսումնասիրում է ծրագրին դիմած և շահառու չդարձած ընտանիքների ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում՝

ա. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից, 2022 թվականի դեկտեմբերի 12-ից կամ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից առաջ առնվազն 12 ամիսների ընթացքում Լեռնային Ղարաբաղի պետական կամ մասնավոր կառույցներում աշխատելու, կենսաթոշակ կամ այլ դրամական վճարներ ստանալու և դրանք Լեռնային Ղարաբաղում իրացնելու, ֆինանսական գործարքներ կատարելու, կրթական, առողջապահական ծառայություններից օգտվելու մասին վկայող և (կամ) այլ առնվազն 2 փաստաթուղթ, որոնց թվագրումները պետք է ունենան առնվազն 6 ամսվա տարբերություն,

բ. 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք ունենալու և դիմելու օրվա դրությամբ այն օտարած լինելու հանգամանքները պարզաբանող փաստաթղթերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի իսկության ստուգման նպատակով, ըստ անհրաժեշտության, իրականացնում է հարցումներ այն կառույցներ, որոնք պատասխանատու են համարժեք տեղեկատվության մշակման և տվյալների շտեմարանների վարման համար.

3) ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքների հիման վրա կայացնում է որոշում ծրագրի շահառուի կարգավիճակ չստացածներին շահառուի կարգավիճակ շնորհելու կամ սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված դիմում-բողոքը մերժելու վերաբերյալ: Շահառուի կարգավիճակի շնորհումը հիմք է հանդիսանում նրանց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի

14-ի N 898-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված հավաստագրի տրամադրման համար:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Որոշման հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով սահմանված մերժման հիմքերով ծրագրին դիմած և շահառուի կարգավիճակ չստացած դիմումատուները սույն հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված փաստերի առկայության դեպքում ծրագրից օգտվելու իրենց իրավունքի վերականգնման նպատակով հանձնաժողովի նախագահին գրավոր կարգով ներկայացնում են դիմում-բողոք մերժումը ստանալուց հետո 2 ամսյա ժամկետում: Դիմում-բողոքը պետք է պարունակի՝

1) հանձնաժողովի անվանումը, որին ներկայացվում է դիմումը.

2) ծրագրին դիմած և շահառուի կարգավիճակ չստացած դիմումատուի (դիմումատուների) անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը, փաստացի բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը.

3) բողոքարկման առարկան.

4) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և հաստատում օրակարգը՝ հիմնվելով սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված դիմում-բողոքների վրա.

3) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ներկայացնում հանձնաժողովն այլ մարմիններում և կազմակերպություններում:

8. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ, եթե այդ ժամանակահատվածում ստացվել են սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված դիմում-բողոքներ:

9. Հանձնաժողովը դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում իրավասու է կայացնելու որոշում ինչպես դրանք բավարարելու, այնպես էլ մերժելու մասին: Ընդ որում՝ դիմում-բողոքների բավարարման համար հիմք է հանդիսանում սույն հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» կետերով սահմանված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված հետևյալ հանգամանքներից առնվազն մեկը.

1) դիմում-բողոք ներկայացրած անձը (ընտանիքը) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից, 2022 թվականի դեկտեմբերի 12-ից կամ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից առաջ (կախված նրա տեղահանման ամսաթվից) առնվազն 12 ամիսների ընթացքում փաստացի բնակվել է Լեռնային Ղարաբաղում.

2) դիմում-բողոք ներկայացրած անձը (ընտանիքը) 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ունեցել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք, սակայն դիմելու օրվա դրությամբ այն օտարել է համապատասխան վճարումների կատարման անհնարինության պատճառով:

10. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է միևնույն դիմում-բողոքի ուսումնասիրության նպատակով հրավիրել մեկից ավելի նիստեր, սակայն միևնույն դիմում-բողոքն ուսումնասիրելու և դրա վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 45 օրացուցային օրը՝ դիմում-բողոքը ներկայացնելու օրվանից հաշված:

11. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է ստեղծել աշխատանքային խմբեր, հրավիրել փորձագետների, այդ թվում՝ այլ պետական մարմիններից:

12. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի կայացման ամսաթիվն ու ժամը.

2) հանձնաժողովի նիստին ներկա անդամների կազմը.

3) քննարկվող հարցը.

4) տեղեկություններ քննարկմանը մասնակցող հրավիրված անձանց մասին.

5) հարցի քննարկմանը մասնակցող անձանց պարզաբանումները, քննարկման արդյունքները.

6) հարցի քննարկման ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերը և հարցին առնչվող այլ տեղեկություններ.

7) հանձնաժողովի վերջնական որոշման բովանդակությունը.

8) հանձնաժողովի անդամի բացակայության և դրա պատճառների մասին.

9) ըստ անհրաժեշտության այլ տեղեկություններ:

13. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և նիստին մասնակցած անդամները: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հանձնաժողովի անդամներին առաքվում են էլեկտրոնային եղանակով նիստից հետո 5-օրյա ժամկետում:

14. Հանձնաժողովի նիստերին սույն որոշման N 4 հավելվածով նախատեսված պետական մարմնի անդամի մասնակցությունը կախված է նիստի օրակարգում ընդգրկված հարցերի բնույթից:

15. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների առնվազն 1/2-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

16. Հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների առաջարկությամբ նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրյալ անձինք (փորձագետներ, մասնագետներ և այլն), որոնց նիստի ընթացքում վերապահվում են բացառապես խորհրդատվական բնույթի գործառույթներ:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ընդունում է հանձնաժողովի նախագահին ներկայացված դիմում-բողոքները, ստուգում է դրանց համապատասխանությունը սույն հավելվածի 5-րդ կետով

սահմանված պահանջներին, դիմում-բողոքը ստանալուց հետո առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմում-բողոք ներկայացրած անձին գրավոր տեղեկացնում է դիմում-բողոքում առկա թերությունների մասին և առաջարկում է վերացնել դրանք 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2) սահմանում է հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ցանկը.

3) նիստի օրակարգը ոչ ուշ, քան 3 օր առաջ ուղարկում է հանձնաժողովի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նիստին հրավիրված անձանց.

4) ամփոփում է հանձնաժողովի աշխատանքների իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված առաջարկություններն ու դիտողությունները.

5) հանձնաժողովի նիստում կայացված որոշումների վերաբերյալ գրավոր տեղեկացնում է դիմում-բողոք ներկայացրած անձին ոչ ուշ, քան նիստից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

18. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

03.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ